ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/302

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

ՀՀ ՖՆ աշխատակազմի ներկայացուցիչներ

Ա. Աղաբաբյանի (լիազորագիր՝ տրված 16.11.2021թ.),

Լ. Սահակյանի (լիազորագիր՝ տրված 16.11.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.11.2021թ. թիվ 26/26-1/18629-2021 գրությամբ Պողոս Սարգսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, աշխատակազմի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 02.11.2021թ. թիվ 1/17-2/17917-2021 գրության հիման վրա, 09.11.2021թ. թիվ 26/26-1/18269-2021 գրությամբ նախաձեռնել է Պողոս Սարգսյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Պողոս Սարգսյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Պողոս Սարգսյանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/302 ընթացակարգի շրջանակներում 17.11.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմը 02.11.2021թ. թիվ 1/17-2/17917-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-21/17» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Պողոս Սարգսյանի ներկայացրած հայտում առկա են եղել անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ: Վերջինիս մասին մասնակիցը ծանուցվել է, սակայն սահմանված ժամկետում չի ներկայացրել շտկված փաստաթղթերը:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի գ/ պարբերությունը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 45-րդ կետի պահանջները՝ Ձեզ ենք ներկայացնում Պողոս Սարգսյանի տվյալները՝ համապատասխան հիմքերով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/302 ընթացակարգի շրջանակներում 17.11.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր իրենց հերթին պնդել են վերը շարադրված դիրքորոշումը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/302 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/302 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իր կարիքների համար գնումների համակարգողների շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացների կազմակերպման ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-21/17» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել Պողոս Սարգսյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.10.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ հակադարձ աճուրդի արդյունքում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Պողոս Սարգսյանի կողմից ներկայացված Հավելված 1-ը լրացված է թերի (բացակայում է կազմակերպության իրավական տեսակը, կազմակերպության հասցեն, էլ փոստի հասցեն), Հավելված 1-ում բացակայում է էլ. թվային ստորագրությունը, ինչպես նաև եթե մասնակիցը հանդիսանում է իրավաբանական անձ, ապա ներկայացված չէ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը eauction.armeps.am համակարգի միջոցով ծանուցել է Մասնակցին արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.10.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Պողոս Սարգսյանի կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել հրավերի պահանջներին համապատասխան շտկված փաստաթղթերը:

6. ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, 02.11.2021թ. թիվ 1/17-2/17917-2021 գրությամբ Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ներկայացրել է լիազորված մարմնին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի 02.11.2021թ. թիվ 1/17-2/17917-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպես, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իր կարիքների համար գնումների համակարգողների շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացների կազմակերպման ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-21/17» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել Պողոս Սարգսյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.10.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ հակադարձ աճուրդի արդյունքում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Պողոս Սարգսյանի կողմից ներկայացված Հավելված 1-ը լրացված է թերի (բացակայում է կազմակերպության իրավական տեսակը, կազմակերպության հասցեն, էլ փոստի հասցեն), Հավելված 1-ում բացակայում է էլ. թվային ստորագրությունը, ինչպես նաև եթե մասնակիցը հանդիսանում է իրավաբանական անձ, ապա ներկայացված չէ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը eauction.armeps.am համակարգի միջոցով ծանուցել է Մասնակցին արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.10.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Պողոս Սարգսյանի կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել հրավերի պահանջներին համապատասխան շտկված փաստաթղթերը:

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, ***02.11.2021թ. թիվ 1/17-2/17917-2021 գրությամբ Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ներկայացրել է լիազորված մարմնին:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են***

<u>անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,</u> ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով <u>ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***<u>Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:</u>***

Կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Պատվիրատուի կողմից ներկայացված փաստաթղթերը, մասնավորապես՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.10.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությունը, հարկ եմ համարում արձանագրել, ***<u>որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Պողոս Սարգսյանի կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել հրավերի պահանջներին համապատասխան շտկված փաստաթղթերը, այնուհետև, առանց Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան Պողոս Սարգսյանի հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ որոշում կայացնելու, 02.11.2021թ. թիվ 1/17-2/17917-2021 գրությամբ Մասնակցի տվյալները՝ համապատասխան փաստաթղթերով, ներկայացրել է լիազորված մարմնին՝ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:</u>***

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել Պողոս Սարգսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.11.2021թ. թիվ 26/26-1/18269-2021 գրությամբ Պողոս Սարգսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**